


5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Ժողովրդագրական իրավիճակը

Տարեկան վիճակագրական ծրագրով նախատեսված է ժողովրդագրական ցուցանիշներն ամփոփել և հրապարակել եռամսյակային պարբերականությամբ: Սակայն, կորոնավիրուսային (COVID-19) համավարակով պայմանավորված, 2021թ. հունվար-ապրիլ ամիսների կտրվածքով որոշ ժողովրդագրական ցուցանիշներ ամփոփվել են շտապ եղանակով և ստորև ներկայացվում են նախնական տվյալները:

2021թ*. հունվար-ապրիլին կենսունակության գործակիցը՝ ծնվածների և մահացածների հարաբերակցությունը, կազմել է 98.0%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրված 107.8 %-ի համեմատ:

Ծննդյան և մահվան դեպքերը, 2019-2021թթ. հունվար-ապրիլ



ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները, հունվար-ապրիլ

	Բացարձակ թվաքանակ, մարդ/դեպք			2021թ. բացարձակ ցուցանիշի փոփոխությունը, %		1000 բնակչի հաշվով, պրոմիլ		
	2019թ.	2020 թ.	2021թ.*	2019թ. նկատմամբ	2020թ. նկատմամբ	2019թ.	2020թ.	2021թ.*
Ծնվածներ	10 543	10 178	11 466	108.8	112.7	10.8	10.4	11.8
Մեռելածիններ	135	129	161	119.3	124.8	12.6 ¹	12.5 ¹	13.8 ¹
Մահացածներ	9 510	9 445	11 704	123.1	123.9	9.8	9.7	12.0
Բնական հավելված/նվազում	1 033	733	-238	-23.0	-32.5	1.0	0.7	-0.2
Ամուսնություն	5 214	3 709	5 537	106.2	149.3	5.4	3.8	5.7
Ամուսնալուծություն	1 157	1 053	1 297	112.1	123.2	1.2	1.1	1.3
0-1 տարեկան մահեր	68	93	80	117.6	86.0	6.4 ²	9.1 ²	7.0 ²
0-4 տարեկան մահեր	84	105	90	107.1	85.7	8.0 ²	10.3 ²	7.8 ²


* նախնական տվյալներ

¹ 1 000 կենդանի ծնվածի և մեռելածնի հաշվով

² 1 000 կենդանի ծնվածի հաշվով

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Գրանցված ամուսնության և ամուսնաձուլության դեպքերը, 2019-2021թթ. հունվար-ապրիլ



ՀՀ մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների, հունվար-ապրիլ (Աղբյուրը՝ մահվան բժշկական վկայականների հիմքով կազմված քաղաքացիական կացության մահվան վերաբերյալ ակտերի գրանցումները)

	2020թ., մարդ	%-ով ընդհա- նուրից	2021թ.* մարդ	%-ով ընդհա- նուրից	Բացարձակ ցուցանիշի փոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %
Մահացածների թվաքանակը	9 445	100	11 704	100	123.9
այդ թվում՝ ըստ պատճառների					
արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (I00-I99)	5 280	55.9	5 821	49.7	110.3
Նորագոյացություններից (C00-D48)	1 828	19.4	1 746	14.9	95.5
շնչառական օրգանների հիվանդություններից (J00-J99)	940	9.9	895	7.7	95.2
մարսողական օրգանների հիվանդություններից (K00-K99)	489	5.2	444	3.8	90.8
վարակիչ և մակաբուծային հիվանդություններից (A01-B99)	56	0.6	47	0.4	83.9
հիվանդացության և մահացության արտաքին պատճառներից (V01-Y98)	266	2.8	403	3.4	151.5
COVID-19, ՎԻՐՈՒՄ	25	0.3	1 722	14.7	...
այլ հիվանդություններից	561	5.9	626	5.4	111.6

* նախնական տվյալներ